ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

Տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը պետական իրավական փորձաքննության ուղարկելու հարցի վերաբերյալ

Հայտնում ենք, որ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի պահանջների՝ ՀՀ արդարադատության նախարարությունում պարտադիր պետական իրավական փորձաքննության են ենթակա **ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերը**: Նորմատիվ իրավական ակտի **նախագիծը** հիմնավորման հետ մեկտեղ փորձաքննության է ուղարկում համապատասխան ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը կամ Կառավարության անդամը: Փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ շարադրվում են կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը (եթե կիրառելի է), կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, **ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը**:

Նորմատիվ իրավական ակտի նախագծի փորձաքննության եզրակացությունը տրվում է նորմատիվ իրավական ակտի նախագիծը նախարարություն մուտքագրվելու օրվան հաջորդող 15 **աշխատանքային** օրվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Առավել բարդ կամ ծավալուն նորմատիվ իրավական ակտի նախագծի փորձաքննության եզրակացության ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 աշխատանքային օրով, որի մասին տեղեկացվում են նախագիծը ներկայացնողները:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ **ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը** Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով **օրենքով լիազորված լինելու դեպքում** Սահմանադրությամբ նախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտն է: Նույն հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն, **անհատական իրավական ակտը**՝ նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտն է, որը սահմանում է

վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց, իսկ **ներքին իրավական ակտը** նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված իրավական ակտն է, որը սահմանում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից: Մասնավորապես հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ և 5-րդ կետերը և 6-րդ հոդվածը, հայտնում ենք, որ վարքագծի պարտադիր կանոններ չեն պարունակում, ուստի նորմատիվ բնույթի չեն և հետևաբար ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացնելու անհրաժեշտություն չկա՝

-համայնքի զարգացման ծրագիրը,.

-համայնքի ավագանու կանոնակարգը,.

-համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը,.

-համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը,.

-համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը,.

-համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, համայնքապետարանի և ենթակա կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը,

-համայնքի սեփականություն համարվող գույքն անհատապես նշված անձանց օգտագործման տրամադրումը, օտարումը, դրանց վարձավճարները, օտարման գների չափերը, պայմանները, մեկնարկային գները և այլն:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ ակտերը, որոնք ըստ էության չեն բավարարում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված «նորմատիվ իրավական ակտին» առաջադրվող պահանջներին, հանդիսանում են անհատական կամ ներքին (լոկալ) իրավական ակտեր, դրանք չպետք է պարունակեն անորոշ հասցեատերերի համար իրավունքներ և պարտականություններ սահմանող իրավական նորմեր և համայնքի ավագանու կողմից ընդունվելու դեպքում պետք է հրապարակվեն և ուժի մեջ մտնեն

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված ժամկետներում և կարգով:

Բացի այդ, ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացվող ՀՀ համայնքների ավագանիների որոշման նախագծերը (այսուհետ՝ նախագծեր) ներկայացվում են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի մի շարք կրկնվող խախտումներով, մասնավորապես՝

1/ նախագծերի վերնագրերում նշվում են փոփոխվող իրավական ակտի լրիվ անվանումը, մինչդեռ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջների համաձայն, պետք է նշվի կրճատ անվանումը.

2/ ճիշտ չեն նշվում իրավական ակտերի ուժի մեջ մտնելու ժամկետները, շատ հաճախ նշվում է, որ իրավական ակտն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից,

3/ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի բնույթը հաճախ չի նշվում կամ չեն պահպանվում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի՝ նախագծի հիմնավորմանը ներկայացվող պահանջները՝ կապված ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածության հետ.

4/ ներկայացրած նախագծերում հաճախ հղումներ են կատարվում հիշատակվող իրավական ակտերի հին կամ ներկայացման օրվա դրությամբ չգործող տարբերակներին՝ նշելով սխալ հոդվածներ և հաշվի չառնելով այն հանգամանքը, որ այդ ակտերում վաղուց կատարվել են փոփոխություններ.

5/ ներկայացված նախագծերի կետերի և ենթակետերի համարակալումները շատ հաճախ չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին, այսպես՝ նախագծերում դրույթները պետք է շարադրվեն հերթական համար ունեցող կետերի տեսքով: Կետերը կարող են բաժանվել միայն համարակալված ենթակետերի, իսկ ենթակետերը՝ միայն համարակալված պարբերությունների: Կետերը և ենթակետերը համարակալվում են արաբական թվանշաններով, իսկ պարբերությունները՝ հայերենի այբուբենի փոքրատառերով.

6/ հաճախ ներկայացվում են անհատական կամ լոկալ իրավական ակտեր կամ նախագծեր՝ որտեղ ակտի բնույթը նշված է որպես նորմատիվ, օրինակ առանձին կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց արտոնություններ, օգնություններ տրամադրելու մասին.

7/ ներկայացվող նախագծերին հաճախ չեն կցվում դրանցով հաստատվող և դրանց բաղկացուցիչ մաս կազմող հավելվածները կամ ներկայացվում են միայն հավելվածները՝ առանց այն նախագծերի, որոնցով դրանք պետք է հաստատվեն:

Բացի այդ, ՀՀ համայնքների կողմից դեռևս շարունակվում են ՀՀ արդարադատության նախարարություն **պետական փորձագիտական եզրակացություն և/կամ պետական գրանցում ստանալու նպատակով ներկայացվել ավագանու կողմից ընդունված որոշումներ՝** 2 օրինակից, թելակարված, կնքված**, ինչպես նաև դրանցից քաղվածքներ կամ արձանագրություններ,** ինչն այլևս նախատեսված չէ 07.04.2018թ. ուժի մեջ մտած «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին և 46-րդ հոդվածի 2-րդ մասին պահանջները՝ հայտնում ենք, որ ենթաօրենսդրական նորմատիվ ակտի **նախագծի** վերաբերյալ պարտադիր պետական-իրավական փորձագիտական եզրակացությունը ստանալուց հետո, համայնքների ավագանիները փորձաքննությամբ հայտնաբերված թերությունները վերացնելուց հետո այն ընդունում և պաշտոնապես հրապարակում են մինչև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: